Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահի
2018 թվականի հունվարի 25-ի
Կ-22-Ա կարգադրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների հետ կապված ներկայացուցչական ծախսերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին հատկացված միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի կարգադրության և դրա հիման վրա հաստատված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների ծրագրին և ներկայացուցչական ծախսերի նախահաշվին համապատասխան:

2. Պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների ծրագիրը և ներկայացուցչական ծախսերի նախահաշիվը կազմում և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի հաստատմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի արարողակարգի վարչությունը՝ ղեկավարվելով սույն կարգադրության 2-րդ կետով հաստատված հավելվածով և համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի գործերի կառավարչության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի կարգադրությամբ նշանակված պաշտոնական պատվիրակությունն ընդունող պաշտոնատար անձի (ներկայացուցչի) հետ:

3. Պաշտոնական պատվիրակությունն ընդունող պաշտոնատար անձը (ներկայացուցիչը) պարտավոր է պահպանել պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների ծրագրով և ներկայացուցչական ծախսերի նախահաշվով սահմանված ծախսերի չափերը:

Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ